

«Մխիթար Մեքաստացի» կրթահամալիր
2015թ.

Մայրենի լեզու, 4-րդ դասարան
5-րդ տարբերակ

Առաջին մաս: Կարդա՛ տեքստը և պատասխանի՛ր տրված հարցերին:

Ստոկհոլմ քաղաքը սովորական քաղաք է, ինչպես աշխարհի մյուս քաղաքները: Այդ քաղաքի շատ սովորական մի շենքում ապրում է սովորական մի ընտանիք:

Այդ ընտանիքում բոլորը սովորական մարդիկ են՝ հայրիկն էլ է սովորական, մայրիկն էլ: Բեասն, Բետան և Մանչուկն էլ սովորական երեխաներ են:

Ամբողջ շենքում ընդամենը մի անսովոր արարած կա՝ Կառլսոնը, որը ապրում է տանիքին:

Գուցե ուրիշ քաղաքներում տանիքին ապրելը սովորական բան է, բայց Ստոկհոլմում, Կառլսոնից բացի, ոչ ոք այդտեղ չի ապրում:

Կառլսոնը փոքրիկ, հաստիկ, ինքնավստահ մարդուկ է: Նա կարողանում է թռչել. հենց նա իր փոքրի վրայի կոճակը սեղմի, մեջքին գտնվող փոքրիկ շարժիչը կաշխատի, մի քիչ հետո կպտտվի պտուտակը, և նա թռչել:

Կառլսոնը շատ լավ է զգում տանիքի վրա, ամեն երեկո նստում է ու նայում աստղերին. տանիքից աստղերն ավելի լավ են երևում: **Նա չի հասկանում թե ինչու մարդիկ չեն բարձրանում տանիք՝ աստղերին նայելու:**

Իսկ մարդիկ նույնիսկ չգիտեն, որ իրենց շենքի տանիքին նրա տնակը կա, չեն էլ կարող տեսնել, որովհետև այն թաքնված է ծխնելույզի ետևում: Ընդհանրապես, մեծերը ուշադրություն կդարձնեն՝ այդքան փոքր տան վրա ու Կառլսոնի նման մի մարդուկի:

Մանչուկին իրենց տանը բոլորը սիրելի ու երես տալիս: Բայց այդ օրը, երբ նա ու Կառլսոնը ծանոթացան, այնքան էլ հաջող օր չէր նրա համար, և Մանչուկ լինելը բոլորովին էլ հրաշալի չէր: Մայրիկն ու քույրերը նեղացնել նրան, իսկ հայրիկը խիստ բարկացել էր դպրոցից ուշ գալու պատճառով:

- Թափառում ես փողոցներում ծուլ անբանի պես,- ասել էր նա:

Բայց հայրիկը չգիտեր, որ Մանչուկին այդ օրը ճանապարհին մի փոքրիկ, սիրունիկ շնիկ էր հանդիպել, մոտեցել, հոտոտել, շարժել պոչիկը, կարծես ուզում էր հենց Մանչուկի շունը դառնալ: Մանչուկը նրան տուն կբերեր, իհարկե, բայց ո՞վ կթողներ, որ տանը շուն պահի: Բացի դրանից, այդ ժամանակ մի մորաքույր էր հայտնվել և կանչել շանը.

- Ռիկի՛, Ռիկի՛:

Փոքրիկը հասկացել էր, որ շունը երբեք իրենը չի լինի:

- Ուրեմն ամբողջ կյանքում առանց շան եմ ապրելու,- տխուր ասաց Մանչուկը:- Ա՛յ, մայրիկ, դու հայրիկ ունես, քույրիկները՝ Բեասն և Բետան, միշտ միասին են, իսկ ես... Ես մենակ եմ, ոչ ոք չունեմ:

- Միրելի՛ Մանչուկ, չէ՞ որ բոլորս քոն ենք,- ասաց մայրիկը:

- Չգիտեմ...,- հոգոց **հանել** Մանչուկը, ու նրան հանկարծ թվաց, թե ինքը մեն-մենակ է աշխարհում ու ոչինչ չունի:

Ասենք՝ մի սենյակ ունի, և Մանչուկը գնաց իր սենյակը: Հենց այդ ժամանակ հայտնվեց Կառլսոնը...

1. Ինչո՞վ էր անսովոր Մանչուկենց շենքը: Գտի՛ր համապատասխան նախադասությունները և կարմի՛ր ներկիր:
2. Ինչպիսի՞ն էր Մանչուկի ընտանիքը:
3.
 - 3.1. Ինչո՞ւ էր Մանչուկը մենակ զգում. ճիշտ պատասխանը ներկի՛ր որևէ գույնով.
 - ա) ծնողները չէին սիրում նրան
 - բ) քույրերը չէին խաղում նրա հետ
 - գ) տնեցիները չէին թողնում, որ շուն պահի տանը
 - դ) Կառլսոնը հեռացել էր:
 - 3.2. Ինչի՞ց էր Մանչուկը հասկացել, որ շունը երբեք իրենը չի լինի:
4. Ինչո՞ւ էր Կառլսոնը տանիքի վրա լավ զգում. ճիշտ պատասխանը ներկի՛ր որևէ գույնով.
 - ա) նա սիրում էր տունը
 - բ) տանիքից աստղերն ավելի լավ են երևում
 - գ) նա թաքնվում էր մարդկանցից
 - դ) ուզում էր տարբերվել բոլորից:
5.
 - 5.1. Ինչպե՞ս էր թռչում Կառլսոնը: Նկարագրությունը պատճենի՛ր այստեղ:
 - 5.2. Ի՞նչ է նշանակում «Այդ օրը Մանչուկ լինելը բոլորովին էլ հրաշալի չէր»:
6. Դեղին ներկած բայերը անհրաժեշտ ձևով համապատասխանեցրո՛ւ տեքստին՝ պահպանելով գույնը:
7. Տեքստից դո՛ւրս բեր մեկ պարզ նախադասություն:

Երկրորդ մաս: Կատարի՛ր տրված առաջադրանքները:

8. Տեքստի բառերից 4-ում բաց թողած տառի փոխարեն կանաչ ներկած գծիկ է դրված: Լրացրո՛ւ բաց թողած տառերը՝ չփոխելով գույնը:
9. Տրված նախադասության ստորոգյալը ներկի՛ր մոխրագույն:

Մանչուկին այդ օրը ճանապարհին մի փոքրիկ, սիրունիկ շնիկ էր հանդիպել:
10. Տեքստում կարմիր գրված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան: Դի՛ր բաց թողնված կետադրական նշանը:
11. Ո՞ր բառն է ընկղմվել բառի հոմանիշը: Ճիշտ տարբերակն ընդգծի՛ր:
 - ա) մտածել
 - բ) սուզվել
 - գ) ընկճվել
 - դ) ընկերանալ
12. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է նրա տեսակը՝ ըստ կազմության: Միավ տարբերակն ընդգծի՛ր.
 - ա) պատմություն-ածանցավոր
 - բ) գառնուկ- ածանցավոր
 - գ) բլրակ- ածանցավոր
 - դ) սոճի – ածանցավոր

13. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված (ընդգծի՛ր):
- ա) սպիտակ – ածական
 - բ) հեքիաթային – գոյական
 - գ) մեջք – գոյական
 - դ) նեղ – ածական
14. Փակագծերում տրված բառերը ձևափոխելով՝ տեղադրիր բաց թողած տեղերում:
(ընկնել, ջուր)
- Ոգնին գետը ու փորձում էր բարձրանալ.....երես: